Հարգելի ուսանողներ,

ՎիվաՍել-ՄՏՍ-ը հրավիրում է մասնակցելու «Վիվա-Սթարթ» ուսուցողական ծրագրին, որի մեկնարկը կտրվի ս.թ. հոկտեմբերի 1-ին և կավարտվի ս.թ. դեկտեմբերի 27-ին: Ծրագրի նպատակն է զարգացնել ուսանողների՝ վաճառքի և սպասարկման հմտությունները: Ծրագրի ընթացքում հնարավորություն կունենաք կիրառելու Ձեր գիտելիքները վաճառքի, միջանձնային հաղորդակցման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ՝ հեռահաղորդակցության, հաճախորդների սպասարկման և ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտներում:

Ծրագրի սկզբում անցկացվելու է երկօրյա դասընթաց, իսկ այնուհետև կազմակերպվելու է առնվազն կես օրվա ներգրավվածությամբ պրակտիկա՝ Երևանում և ՀՀ մարզերում գործող ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում: Ծրագրի ավարտին կտրվեն հավաստագրեր, իսկ բարձր կատարողական ցուցաբերած ուսանողները կընդգրկվեն ընկերության տվյալների բազայում՝ հետագայում թափուր պաշտոններ զբաղեցնելու նպատակով:

Ծրագրին կարող են դիմել միայն բուհի 3-րդ, 4-րդ և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսում սովորող ուսանողները: Ծրագրի մասնակից դառնալու համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ որակավորումները.

1. բարձր առաջադիմություն և օտար լեզուների իմացություն,

2. հաղորդակցման գերազանց հմտություններ,

3. դրական մոտեցում/էնտուզիազմ,

4. տեղեկատվությունն արագ ընկալելու և ներկայացնելու կարողություն,

5. քաղաքավարության կանոնների/էթիկայի նորմերի պահպանում:

Ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ է ներկայացնել CV/ինքնակենսագրական և մոտիվացիոն գրություն, որի մեջ պետք է նշվի, թե ինչու եք ցանկանում մասնակցել տվյալ ծրագրին, ինչ սպասելիքներ ունեք ծրագրից և ինչու պետք է Ձեզ ընտրենք: Պարտադիր է նշել նաև Ձեր բնակության վայրը և նախընտրած մարզի 2-3 համայնք, որտեղ կարող եք մասնակցել մեր ծրագրին:

Ըստ վերոհիշյալ պահանջների, իրականացվելու է մասնակիցների ընտրության գործընթաց:

Խնդրում ենք մինչև ս.թ. սեպտեմբերի 20-ը Ձեր դիմումներն ուղարկել VivaStart@mts.am էլեկտրոնային հասցեին՝ կից ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը: Դուք կարող եք դիմել նաև www.mts.am և www.staff.am կայքերով:

Շնորհակալություն հետաքրքրության և էնտուզիազմի համար: ☺